ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ

Պոլսի յունաց պատրիարք Իսայիմ Գ. ցանկանալով բարձրացնել իւր հօտի կրօնա-բարոյական վիճակը, առաջարկել է պատրիարքական կեսրոնական երեցփոխ. ժողովին նշանակել մի առանձին կրօնաւոր (լերիկիբիկս) ամբողջ թեմի համար, որ հերթով շրջէ ու քարոզէ թեմի բոլոր եկեղեցիներում, քանի որ Պոլիսը՝ իբրև միջազգային քաղաք, օրըստօրէ լցւում է արևմտքից անցած զանազան օտարադաւան քարոզիչներով, որոնք եռանդով քաշում են ուղղափառների փարախից դէպի իրենց, լցնելով մայրաքաղաքն ու շրջակայքը կոյսերով, կրօնաւորներով, միսիոնարական զանազան հաստատութիւններով։

Նշանակելիք քարոզիչը պէտք է հրաւիրուի Խալկինի աստուածաբանական դպրանոցն աւարտած, իւր մաքուր կենցաղով և հռետորական տաղանդով աչքի ընկնող կուսակրօններից և պէտք է ապրէ պատրիարքարանում, ուր և կարուի նրան ամեն անգամ դէպքին ու ժամանակին յարմար հրահանգ քարոզի նիւթի ու գործելակերպի վերաբերեալ։

Բացի այս, պատրիարք Իսայիմը՝ դպրոցների կրօնական բարոյական դաստիարակութիւնը բարձրացնելու համար առաջարկել է նոյն ժողովին—դպրոցներում կրօնի դասերից դուրս՝ մացնել գոնէ շաբաթական մի անգամ կրօնա-բարոյագիտական զրոյցներ։ Այս զրոյցները պէտք է կազմակերպեն ընդունակ հոգևորականները, ջանալով կենդանի խօսքով ըմբռնել տալ աշակերտներին քրիստոնէական բարոյախօսութիւնը, ազդել նոցա սրտի ու հոգու վրայ, տրամադրել նոցա դէպի ճշմարիտ քրիստոնէական կենցաղավարութիւն։

Ի վերջոյ պատրիարքը սկզբունք է դնում՝ աստուածաբանական կրթութիւն չստացած աշխարհականներից կրօնաւորներ չնշանակել, առաջարկելով այդ պաշտօնի համար անպայման հոգևորականներ և միմիայն Խալկինի աստուածաբանական դպրանոցն աւարտած աշխարհականներ։

Ցունական մամուլը մեծ համակրանքով վերաբերուեց պատրիարքի այս առաջարկութիւններին։